VIII ԴԱՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԱՌՆԻԿ ՇԱԽԿՅԱՆ

VIII—IX դարերում Հայաստանում արաբական տիրապետության մոտ 200-ամյա լուծը արգելակիչ և կասեցնող նշանակություն ունեցավ հայ ժողովրդի տնտեսական ու մշակութային կյանքի՝ հատկապես ճարտարապետության և շինարվեստի զարգացման համար։ Դրանով պայմանավորված՝ արաբական տիրապետության շրջանում հայերի շինարարական գործունեության լուսաբանումը մասնագիտական գրականության մեջ մնացել է բաց։ Ուստի այդ շրջանին վերաբերող շինարարական բնույթի յուրաքանչյուր փաստ կամ տեղեկություն որոշակի կարևորություն է ներկայացնում հայ ճարտարապետության պատմության համար։ Ասվածի հետ անմիջականորեն առնչվում են Հովհան Օձնեցի Իմաստասեր (717—728) և Դավիթ Արամոնցի (728—741) կաթողիկոսներին վերաբերող մատենագրական երկու հիշատակություն, որոնց շուրջ ցանկանում ենք խոսել ստորև։

Հայ պատմագիտության մեջ ընդունված է Հայաստանում արաբական տիրապետության սկզբնական ·շրջանը՝ 706—748 թվականներն անվանել համեմատաբար խաղաղ ժամանակաշրջան[1]։ Նկատի ունենալով այդ՝ Լեոն մատնանշում է հայերի վերակենդանացող ձգտումը՝ արաբական ռեժիմն ազգային արժեքների պահպանման ու զարգացման գործում օգտագործելու համար և սպառնացող քաղկեդոնական վտանգից փրկությունը արաբական ուժի մեջ տեսնելը (վերջինս մատնանշում է նաև Ն. Մառը)[2]։ Ասվածի ճշմարտացիության մեջ համոզվում ենք, երբ ծանոթանում ենք Հովհան Օձնեցի կաթողիկոսի գործունեությանը։ Մեզ են հասել պատմիչների (Կիրակոս Գանձակեցի, Վարդան Արևելցի և ուրիշներ) հիշատակությունները և ավանդապատումային զրույցները նրա կյանքի ու գործունեության վերաբերյալ։ Դրանք, որ երբեմն չափազանցությունների ու առասպելականության քողով են շղարշված, թեկուզև ամբողջությամբ եթե հիմնված չլինեն էլ ճշմարտությունների վրա, համենայն դեպս վկայում են Օձնեցու ապրած ժամանակ հայերի նկատմամբ խալիֆության մեղմ վերաբերմունքի մասին։ Հովհան Օձնեցին, քաղաքականության բնագավառում հետևելով Սահակ Ձորափորեցի կաթողիկոսին (677—703), վարում էր հակաբյուզանդական, արաբների հետ մերձեցման քաղաքականություն, որով նվաճել էր խալիֆության բարյացակամությունը, օգտագործելով այն դավանաբանական հարցերի կարգավորման, իր հոտի ապահովության ու խաղաղության համար[3]։ Հովհան Օձնեցու կրոնադավանաբանական և փիլիսոփայական գործունեությունը հայ պատմագրության մեջ ուղեկցվում է նաև շինարարական գործունեության հիշատակությամբ. «Շինէ (Հովհան Օձնեցին—Գ. Շ.) և եկեղեցի մեծ ի գիւղն իւր Օձուն, որ հուպ է առ քաղաքն Լոռէ»[4], կամ՝ «Շինէր և ինքն ի բազում տեղիս եկեղեցիս որպէս և յիւրականն աւանի զերկնանմանն խորան, բարի առնելով տանն իւրոյ և ընտանեաց»[5]։

Ինչպես հայտնի է, Օձունի գմբեթավոր բազիլիկ եկեղեցու հորինվածքի վերլուծության տվյալներով պատմիչների հիշատակությունը Հովհան Օձնեցու՝ հայրենի գյուղում «մեծ եկեղեցի» կառուցելու մասին, չի հիմնավորվում, բայց որ նա ուղղակիորեն կապ է ունեցել արդեն գոյություն ունեցող եկեղեցու վերակառուցման կամ աչքի ընկնող նորոգման աշխատանքների

---

[1] Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մաս Բ, Երևան, 1960, էջ 392, Լեո, Երկերի ժողովածու, հ. II, Երևան, 1967, էջ 378։

[2] Н. Я. Марр, Аркаун, монгольское название христиан, СПб., 1905, с. 5.

[3] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 67—69, Հ. Մովսիսյան, Հայաստանեայցս առաքելական Ս. Եկեղեցւոյ պատմութիւն, Վաղարշապատ, 1884, էջ 138, Մ. Օրմանյան, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 822—825։

[4] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 70։

[5] Վարդան, Ճառ ի վերայ Յոհան Օձնեցւոյ ըստ խնդրոյ Համազասպ եպիսկոպոսի Հաղբատայ ·(«Արարատ», 1888, № 10, էջ 584)։

հետ, դրանում ուսումնասիրողները միակարծիք են։ Այդ կապակցությամբ Վ. Հարությունյանը գրում է. «Ամենից ճիշտը այն է, որ Հովհան Օձնեցու շինարարական գործունեությունը սահմանափակվել է արդեն գոյություն ունեցող տաճարի վերանորոգմամբ և նրան կից կառուցումների ավարտմամբ, որոնց հետքերը դժվար չէ տեսնել նաև այժմ»[6] (գրեթե նույնը մատնանշում են նաև Գ. Լևոնյանը, Հ. Եղիազարյանը, Ա. Վիսոցկին և ուրիշներ)։ Օձունի եկեղեցուն կից կառուցումների տակ առաջին հերթին պետք է հասկանալ աղոթասրահը երեք կողմից եզերող բաց սրահը, որը թեպետ ժամանակակից չէ եկեղեցուն (հավանական է համարվում, որ նախնականը եղել է փայտաշեն), սակայն սերտորեն ներդաշնակում է նրան, մեծ չափով հարստացնելով արտաքին տեսքը (գծ. 1)։ Արտաքին սրահի զգալի չափերը (մոտ 4 մ լայնությամբ և 7C մ ընդհանուր երկարությամբ), նշանակալից ճարտարապետական հորինվածքը բնութագրում են այն որպես այդ ժամանակի համար կարևոր շինարարական-ճարտարապետական իրողություն։



Գծ. 1

Հովհաննես Դրասխանակերտցին նշում է, որ Հովհան Օձնեցին «...կալաւ իսկ սովորութիւն գեղեցիկ զարդուք պճնազգեստել զանշունչ քարինս եկեղեցւոյ»[7]։ Դրասխանակերտցուն կարծեք թե լրացնում է Վարդան Արևելցին, երբ գրում է. «Շինէր և ինքն ի բաղում տեղիս եկեղեցիս...»։ Այդ դեպքում դժվար թե Օձնեցու շինարարական գործունեությունը սահմանա-

[6] Б. Н. Аракелян, В. М. Арутюнян, С. Х. Мнацаканян, О некоторых вопросах истории армянской архитектуры, Ереван, 1969, с. 82.

[7] Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն, Երուսաղէմ, 1867, էջ 130։

փակվեր միայն Օձունի եկեղեցու արտաքին սրահի վերակառուցմամբ և եկեղեցու նորոգմամբ։

Օձունից ոչ հեռու՝ Արդվի գյուղի հյուսիսարևմտյան մասում է գտնվում Հովհան Օձնեցու անվան հետ կապվող «Սրբաննեսի» (Սուրբ Հովհաննեսի) կոչվող վանքը։ Այն ներկայումս բաղկացած է երկու միանավ իրար կից թաղակապ ոչ մեծ դահլիճներից և առանձին կանգնած զանգակատնից (գծ. 2)։ Հյուսիսային եկեղեցու բեմին կից, երկայնական առանցքից շեղված դիրքով, գտնվում է քարարկղային սարկաֆագ՝ ծածկված երկլանջ սալով, որ վերագրվում է Հովհան Օձնեցուն. «Տաշիր Լօռի է, ուր... կայ տապանն սուրբ պատրիարգին Հայոց Յովհաննու ՕձնեցւոյնՁ։ Այդ մասին հիշվում է նաև «Հայսմավուրք» ժողովածուում. «...եւ կացեալ ի հայրապետութեան սմա մետասան սքանչելի քաղաքավարութեամբ և նշանագործ սրբութիւն փոխեցաւ առ քս. և թաղեցաւ յանապատին իւրում»9։



Գծ. 2

Կից դահլիճների կոնստրուկտիվ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք իրենց սկզբնական վիճակով համաժամանակյա կառուցման արդյունք չեն։ Այդ են վկայում նրանց միջև ներսից և դրսից գոյություն ունեցող ուղղաձիգ կարերը, իրար հետ կապող մուտքային բացվածքի բարավորի և եզրային քարերի տվյալները և, որ կարևոր է, հյուսիսային դահլիճի արևելյան ճակատի ստորին մասի խոշոր, սրբատաշ 2—3 շարք նախնական շարվածքի պահպանվածությունը (նկատենք, որ հյուսիսային դահլիճի մնացած մասերը և մյուս կառույցները մանր, կոպտատաշ քարերով են)։ Որ հարավային դահլիճը հետո է կցված, այդ են վկայում նաև հատակի տապանաքարերի մի մասի ծածկված լինելը նրա հյուսիսային պատով։

Հյուսիսային դահլիճի նախնական շինության մնացորդները (արևելյան պատի ստորին 2.—3 շարք, ընդհանուր մուտքային բացվածքի բարավոր և եզրաքարեր) իրենց հատկանշական գծերով մատնում են նրա վաղ շրջանին պատկանելը։

Ներսում քարարկղային սարկաֆագի գոյությունը, սերնդե սերունդ փոխանցվող ավանդությունները, կապված Հովհան Օձնեցու անվան հետ, և պատմիչների հիշատակությունները (որ Հովհան Օձնեցին «թողեալ էր զաթոռ կաթողիկոսութեն. և ստացել վարս կրաւնաւորականս...»10 կամ «և իւր ընտրեալ տեղի բնակութեան սակաւ մի ի բացեայ ի գիւղէն անդ դադարէր»11) հավանական են դարձնում հյուսիսային դահլիճի նախնական շինության կառուցվելը Հովհան Օձնեցու կողմից։

Հյուսիսային դահլիճի սկզբնական տեսքի խաթարվելն ակնհայտ է. նրա վերակազմության համար բավարար տվյալներ չկան։ Հավանական կարող է համարվել, որ ներկայիս շինությունը բարձրացվել է գոյություն ունեցածի մնացորդների վրա, թեպետ նախապես եկեղեցի լինելը հակասության մեջ կարող է գտնվել եկեղեցիներում թաղումն արգելելու վերաբերյալ քրիստոնեական օրենքի հետ։

Օձնեցուն հաջորդող շրջանում արաբները վերսկսեցին իրենց սահմանափակումները հայ եկեղեցու նկատմամբ։ Այն աստիճան աննպաստ դարձավ հոգևոր կյանքը արաբների միջավայրում, որ Հովհան Օձնեցուց հետո կաթողիկոսական աթոռը դրաղեցրած Դավիթ Արամոնցին թողեց աթոռանիստ Դվին մայրաքաղաքը (որը միաժամանակ արաբ ոստիկանի նստավայրն

8 Վարդան, Աշխարհացոյց, Բարիզ, 1960, էջ 17։

9 «Յայսմաւուրք», Ա, Կոստանդնուպոլիս, 1834, էջ 171։

10 Դ. Հովսեփյան, Մխիթար Այրիվանեցի, նորագյուտ արձանագրություն և երկեր, Երուսաղեմ, 1932, էջ 18։

11 Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 70։

էր) և տեղափոխվեց հայրենի Արամոնք գյուղը։ Հաղորդելով այդ մասին, պատմիչները (Հովհաննես Դրասխանակերտցի, Սամվել Անեցի, Վարդան Բարձրբերդցի, Կիրակոս Գանձակեցի և ուրիշներ) միաժամանակ նշում են Արամոնքում Դավիթ կաթողիկոսի՝ եկեղեցի և կաթողիկոսարան կառուցելու փաստը։ Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է. «շինէ (Դավիթ Արամոնցին—Գ. Շ.) եկեղեցի ի գեղն Արամոնս գեղեցկայարմար յարդարմամբ. և դնէ շուրջանակի նորա տուն բնակութեան՝ վայելուչ իմն յարմարեալ»[12]։ Մասնագիտական գրականության մեջ պատմիչների հիշատակությունը կապվում է Արամոնքում (այժմ՝ Արովյանի շրջանի Արամուս գյուղը) գոյություն ունեցող կիսավեր քառասխորան կենտրոնագմբեթ եկեղեցու հետ, և մի շարք փաստարկումներով հնարավոր չհամարելով, որ այն կարող է Դավիթ Արամոնցու կառուցածը լինել, հեղինակները չեն ընդունում պատմիչների հաղորդման հավաստիությունը։ Ուշադրության չի առնվում այն հանգամանքը, որ Դավիթ Արամոնցին կարող էր կառուցել եկեղեցի՝ կենտրոնագմբեթ եկեղեցուց անկախ, որը կարող էր մեզ չհասնել։

Դավիթ Արամոնցու՝ եկեղեցի և կաթողիկոսարան կառուցելու մասին պատմիչների հիշատակությունները առնչվում են XIII—XIV դդ. պատմիչ Ստեփանոս Օրբելյանի մի հաղորդման հետ. «...Յովհան ոմն ի Թէոդուպոլիս եղև կաթողիկոս. և եկեալ եդ աթոռ ի Կոտայսն յԱրամանս դիւղ...»[13]։ Խոսքը Հովհան հակաթոռ կաթողիկոսի (մոտավորապես 584—610) մասին է, որը կառուցել է Ավանի եկեղեցին և կաթողիկոսարանը։ Ըստ Օրբելյանի, Հովհանը կաթողիկոս է եղել (կամ օծվել) Թեոդուպոլիսում (Կարին), որտեղից եկել և կաթողիկոսական աթոռը դրել է Կոտայքի Արամոնք գյուղում (ինչպես ենթադրվում է՝ մինչև Ավանի եկեղեցու և կաթողիկոսարանի կառուցման ավարտը)։ Օրբելյանի տեղեկությունը Դավիթ Արամոնցու շինարարական գործունեության հետ առնչվում է նրանով, որ եթե Հովհանը կաթողիկոսական աթոռը մինչև Ավան տեղափոխելը դրել է Արամոնքում, նշանակում է այնտեղ արդեն պետք է լիներ և՛ եկեղեցի, և՛ նստավայր։

Ստեփանոս Օրբելյանի հիշատակությունը այն մասին, թե Հովհան Բագարանցին որպես նստավայր ընտրել է Արամոնքը, հաստատում չի գտնում հայ պատմագրության մեջ։ Օրբելյանից վաղ (այդ թվում Հովհան կաթողիկոսին գրեթե ժամանակակից) շատ հիշատակություններում (Սեբեոս, Անանուն ժամանակագրություն, Հովհաննես Դրասխանակերտցի, Կիրակոս Գանձակեցի և ուրիշ.) խոսվում է Հովհան հակաթոռ կաթողիկոսի մասին, սակայն կաթողիկոսական աթոռը Արամոնքում հիմնելու վերաբերյալ խոսք չկա։ Այդ հիշատակություններից համեմատարար հանգամանալից է Հովհաննես Դրասխանակերտցունը. «Յետ այսորիկ ըստ հրամանի կայսերն Մաւրկայ զՅովհան ոմն ի գաւառն Կոդայ ի Բագարան դեղջէ, կացուցանեն կաթողիկոս յունական կողմանն, բնակեցուցանելով զնա ի քաղաքագիւղն Ավան, ուր և շինեաց իսկ ինքնին Յովհան զպայծառակերտ քաւարանն սուրբ, և շուրջանակի նորա զարդարեաց կալուածս կայանի իւրոյ»[14]։ Ինչպես երևում է, Օրբելյանի հիշատակությունը էապես շեղվում է Դրասխանակերտցու և մյուս պատմիչների հիշատակություններից։ Ղ. Ալիշանը այդ կապակցությամբ գրում է. «Օրպելեան պատմիչն սխալ է՝ յառաջ իսկ քան զԴավիթ աթոռ կաթողիկոսի կարգել ասա ի Յովհաննէ, փոխանակ Աւան գեղջ, որպէս հնագոյն պատմիչք աւանդեն»[15]։ Օրբելյանի հիշատակությունը հավաստի չի համարում նաև Ն. Ակինյանը. «Անտեղի է Ստեփ. Օրպելյանի տեղեկությունն թե, «Յովհան ոմն... եկեալ եդ աթոռ ի Կոտայսն յԱրամանս...»[16]։ Հովհաննես Դրասխանակերտցին անհամեմատ մոտ է կանգնած Հովհանի ապրած ժամանակին։ Մյուս կողմից նրա հաղորդած տեղեկությունները հարազատ են VII դարից եկող հիշատակություններին և հանդիպում են նաև հետագա դարերի պատմիչների մոտ։ Դրան հակառակ Օրբելյանը իր ապրած ժամանակով գրեթե 700 տարի հեռու է Հովհանի ժամանակից և շատ հապճեպական է, ինչպես այդ հաճախ է պատահում ուշ շրջանի պատմիչների մոտ, նրա հաղորդած տեղեկության մեջ շփոթված են տեղանունները։ Դա հաստատվում է նաև նրանով, որ Օրբելյանը ոչինչ չի ասում Հովհան կաթողիկոսի՝ Ավանում եկեղեցի և կաթողիկոսարան կառուցելու մասին։

---

12 Հովհաննես Դրասխանակերտցի, նշվ. աշխ., էջ 104—105։

13 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 90։

14 Հովհաննես Դրասխանակերտցի, նշվ. աշխ., էջ 93—94։

15 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 562։

16 Ն. Ակինյան, Կյուրոն կաթողիկոս վրաց, Վիեննա, 1910, էջ 126։

Օրբելյանի հիշատակությունից անկախ որոշակի է, որ Արամոնքում, մինչև Դավիթ Արամոնցու տեղափոխվելը, եղել է եկեղեցի, որի վանահայրը, ինչպես հիշվում է «Գիրք թղթոցի» մի վավերագրում, մասնակցել է 607 թ. Դվինում գումարված եկեղեցական ժողովին[17], կամ, ինչպես հաղորդում է IX դ. վրաց պատմիչ Արսեն Սափարացին, 609 թ., Վրաստանի և Հայաստանի եկեղեցիների բաժանման ժամանակ, Քաղկեդոնի ժողովի կողմնակից քահանաների թվում նա ևս վտարվել է Այրարատից[18]։ Սակայն այդ հանգամանքը հիմք չի տալիս ենթադրելու, որ Դավիթ Արամոնցին չէր կարող նոր եկեղեցի կառուցել, քանի որ հինը արդեն կար։ Հակառակ դեպքում կարելի է կարծել, որ Հռիփսիմեի էնտրոնագմբեթ տաճարը կառուցվել է ոչ թե 618 թվականին, ինչպես հիշվում է Կոմիտաս կաթողիկոսի արձանագրության մեջ, այլ 607 թվականից առաջ, քանի որ «Գիրք թղթոցի» նույն վավերագրում Դվինի ժողովի մասնակիցների թվում հիշվում է նաև «սուրբ Հռիփսիմեի Սամուել» վանահայրը։

Մասնագիտական գրականության մեջ, վկայակոչելով շինել բայի Հ. Օրբելու մեկնությունը[19], Դավիթ Արամոնցու մասին հիշատակությունը դիտվում է ոչ թե որպես նորը կառուցելու, այլ գոյություն ունեցողը նորոգելու, կառուցումն ավարտելու տեղեկություն։ Ասվածը վերաբերում է եկեղեցու շինարարությանը, բայց ոչ կաթողիկոսարանի, որի կառուցումը ուշադրության չի առնվում այդ խնդրին անդրադարձած հեղինակների կողմից։ Հ. Օրբելին շինել բայի իմաստային մեկնությունը կատարել է ոչ թե ընդհանրապես, այլ կոնկրետ պայմաններում՝ Անիի Գալատական եկեղեցու երկու արձանագրությունների առիթով։ Դրանցում, ըստ Օրբելու, շինեցի բայը կառուցեցի իմաստով՝ արձանագրությունների կառուցվածքային և հնագրական վերլուծությամբ, չի արդարացվում։ Պետք է նկատել, որ ինչպես Հ. Օրբելուց առաջ, այնպես էլ նրանից հետո եղել են վեհեր՝ կապված այդ արձանագրությունների ժամանակի և իմաստային նշանակության մեկնության հետ[20]։

Իհարկե, շինել բայը կարող է ստանալ նաև՝ նորոգելու, հարմարեցնելու, բարեկարգելու իմաստ, սակայն ոչ բոլոր դեպքերում. Հ. Օրբելին հենց ինքն է մատնանշում, թե այն կիրառելի է միայն «մեծ նորոգումների կամ ուղղումների առկայության պայմաններում»։ Կամ նույն հաջողությամբ կարելի է կասկածի տակ առնել հայ ճարտարապետության շատ հուշարձանների կառուցման ժամանակը՝ ավանդված պատմիչների հիշատակությամբ։ Պետք է նկատի ունենալ նաև, որ Հ. Օրբելին շինել բայի երկրորդ իմաստը մատնանշում է՝ այն արձանագրությունների մեջ գործածվելու դեպքում. արձանագրությունների հնարավորությունները պատմիչների հիշատակությունների համեմատ զգալիորեն սահմանափակ են, և նրանցում ամեն ինչ չէ, որ մանրամասնորեն շարադրվում է։ Ուստի բառերի երկիմաստություններ (ոչ միայն շինել բայի) արձանագրությունների տեքստերից ելնելով հաճախ է հանդիպում, ինչը չի կարելի ասել պատմիչների հիշատակությունների մասին, որոնք սովորաբար հարկ եղած ծավալով շարադրվում են։ Դրականության մեջ նաև նշվում է, որ շինող և շինել տերմինների բազմիմաստությունը վկայվում է բացառապես ոչ շրջանի աղբյուրներով[21]։

Արամուսի եկեղեցու կառուցման վերաբերյալ Հովհաննես Դրասխանակերտցու և մյուս պատմիչների հանդուսմանալից ու տրամաբանական հաղորդումների մեջ շինել բայից այլ իմաստ չի բխում՝ բացի իր ուղղակի կառուցել իմաստից։

Դավիթ Արամոնցու կաթողիկոսության տարիները (728—741) համընկնում են Հայաստանում արաբական տիրապետության մի ժամանակահատվածի հետ։ Ելնելով դրանից, նրա շինարարական գործունեությունը ուսումնասիրողների մի մասի կողմից անհավանական է ճանաչվում՝ VIII դ. Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետևանքով։

Արաբական տիրապետության շրջանում հայ ժողովրդի շինարարական գործունեության խնդրի ուսումնասիրությունը[22] ցույց է տալիս, որ արաբական լուծը Հայաստանի համար չի

---

17 «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 151, հմմտ. Դ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պր. Գ, Նյու-Յորք, 1944, էջ 20։

18 Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 34։

19 И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, с. 419.

20 Վ. Հարությունյան, Անի քաղաք, Երևան, 1964, էջ 57։

21 Պ. Մուրադյան, Ճարտարապետ Թոդոսակի շինարարական գործունեության ժամանակի խնդիրը («Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական IV գիտական կոնֆերանս, զեկուցումների թեզեր», Երևան, 1979, էջ 99)։

22 Գ. Շախկյան, Արաբական տիրապետության շրջանում հայ ժողովրդի շինարարական

եղել միանշանակ իրողություն. տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում այն ունեցել է տարբեր դրսևորումներ։ Շինարարական աշխատանքների կատարման անհնարինությունը բացարձակ չի եղել։ VIII դարի առաջին կեսին (Օմայյանների հարստության տիրապետության ժամանակ) խալիֆության ներքին ու արտաքին հակասությունների, գահակալական ու ժառանգության շուրջ ծավալվող կռիվների հետևանքով Հայաստանը հաճախ դուրս է մնացել խալիֆության տեսադաշտից, և հայ ժողովուրդը չնչին հնարավորություններն իսկ օգտագործել է վերաշինելու ավերված բնակավայրերը, շինությունները, կառուցելու նորերը։ Դրանով է բացատրվում, որ 706—748 թվականները հայ պատմագիտության մեջ անվանվում են «խաղաղ տարիներ»։ Պարզ է, որ հիմքեր չկան պատմիչների հիշատակությունները՝ Դավիթ Արամոնցի կաթողիկոսի կողմից եկեղեցի և կաթողիկոսարան կառուցելու մասին հավաստի չճանաչելու, թեպետ նրա կառուցած եկեղեցին և կաթողիկոսարանը այսօր փաստական տվյալներով հնարավոր չէ որոշակիացնել։ Արամոնքում կաթողիկոսական պալատի մնացորդներ հայտնի չեն, դրանք ի հայտ բերելու ուղղությամբ էլ պեղումներ չեն կատարվել և բացի պատմիչների համառոտ տեղեկություններից, նրա հարմարավետության մասին, այլ տվյալներ չկան։ Եթե դատելու լինենք արաբների գերիշխանության ժամանակ կառուցված Արուճի կամ հայտնի մյուս կաթողիկոսարանների մնացորդների չափանիշներով և նկատի առնենք, որ Դավիթ Արամոնցին, Սամվել Անեցու հիշատակության համաձայն[23], այդտեղ կաթողիկոս է եղել 10 տարուց ավելի, ապա հավանական կարող է համարվել, որ Արամոնքի կաթողիկոսարանը եղել է աչքի ընկնող կառույց։ Դրանում որոշակիություն կարող են մտցնել միայն պեղումների արդյունքները։ Գոյություն ունեցող կիսավեր քառախորան կենտրոնագմբեթ եկեղեցու ժամանակի խնդիրն էլ հստակեցված չէ, ուսումնասիրողների մոտ նրա թվագրումը տատանվում է VI դ. վերջից մինչև VIII դ. կեսերն ընկած ժամանակահատվածում։

Ամփոփելով վերոշարադրյալը, կարող ենք եզրակացնել.

ա. Կաթողիկոսներ Հովհան Օձնեցին և Դավիթ Արամոնցին, որոնց աթոռակալության տարիները համընկնում են արաբական տիրապետության առաջին շրջանի հետ (Օմայյանների հարստության ժամանակաշրջան) զբաղվել են նաև շինարարական գործունեությամբ (Օձունի գմբեթավոր բազիլիկի նորոգում, արտաքին սրահի վերակառուցում, Արդվիի վանքի դահլիճի նախնական շինության կառուցում, Արամոնքում եկեղեցու և կաթողիկոսարանի կառուցում)։

բ. Շինարարական նշված իրողությունները իրենցով լրացնում են արաբական տիրապետության ժամանակ հայ ժողովրդի շինարարական գործունեության վերաբերյալ փաստական և մատենագրական հայտնի սուղ տեղեկությունների շարքը։

գ. Դրանք ոչ միայն այդ շրջանում հայերի շինարարական գործունեության լոկ փաստեր են, այլև ունեն VIII դ. Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքը բնութագրող կարևոր նշանակություն։

О ДВУХ СТРОИТЕЛЬНЫХ УПОМИНАНИЯХ, ОТНОСЯЩИХСЯ К VIII ВЕКУ

ГАРНИК ШАХКЯН

Резюме

Рассматриваемые историографические упоминания относятся к католикосам Иоанну Одзнеци (717—728) и Давиду Арамонци (728—741), религиозно-конфессиональная деятельность которых сочеталась со строительной деятельностью (реставрация Одзунской купольной базилики, реконструкция наружной галереи, постройка первоначального сооружения северной церкви монастыря Ардви, церкви и патриаршего дворца в Арамонке).

Факты строительства, относящиеся к суровому времени арабского ига, имеют важное значение для характеристики социально-экономической жизни Армении в VIII в.

գործունեության հարցի շուրջ («Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական V գիտական կոնֆերանս, զեկուցումների թեզեր», Երևան, 1982, էջ 161—162)։

23 Սամվել Անեցի, Հավաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 87։